ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ի հավելվածը հանդիսացող և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 21.10.2020թ. թիվ 21/9-Լ որոշմամբ հաստատված Կարանտինի պայմաններում որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի 4-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Սահմանել 2020թ. աշնան որակավորման քննության կազմակերպման և անցկացման ժամանակացույցը, այն է՝

1.1. որակավորման քննություն հանձնելու դիմումների ընդունման ժամկետն է՝ 29.10.2020 թվականից մինչև 09.11.2020 թվականը ներառյալ.

1.2. քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ հավակնորդների համար որակավորման քննությունն անցկացվելու է 19.11.2020թ-ին, ժամը 09:00-ից՝ ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2 հասցեում.

1.3. քրեաիրավական մասնագիտացմամբ հավակնորդների և հատուկ դիմորդների համար որակավորման քննությունն անցկացվելու է 20.11.2020թ-ին, ժամը 09:00-ից՝ ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2 հասցեում:

2. Սահմանել, որ որակավորման քննություն հանձնելու ժամի մասին հավակնորդները տեղեկացվելու են դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված ծանուցմամբ:

3. Սահմանել կարանտինի պայմաններում որակավորման քննությանը մասնակցելու մասին դիմումի ձևը՝ համաձայն հավելված 1-ի:

4. Սահմանել ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի անդամների նախնական գնահատականների քննաթերթիկի ձևը (ձևաթուղթը)՝ համաձայն հավելված 2-ի:

5. Սույն որոշումը հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի նախագահ՝ Արա Զոհրաբյան

Որոշում N 03-Լ
29 հոկտեմբերի 2020թ.
ք. Երևան